Հավելված N 1
ՀՀ փոխվարչապետի N 167 - Ա
որոշման

«ՆՇԱՆ ԵՎ ԱԻԴԱ ԿԱՐԱՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ, ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՔՈԼԵՋԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Արմավիրի մարզի Փարաքար համայնքում գործող Նշան և Աիդա Կարայանների անվան արհեստների, արվեստների և տեխնոլոգիաների քոլեջի ինժեներիայի և կիրառական արտադրություն դասընթացների գործնական ուսումնառություն, որը իրենից ենթադրում է կրթական ծրագրերի շրջանակում ինժեներական և արտադրական բաժնի դասընթացների գործնական ուսումնական ընթացքի համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի արդիականացում նոր սերնդի սարքերի և սարքավորումների ներմուծմամբ և տեղադրմամբ՝ ուսումնական և լաբորատոր գործընթացների կազմակերպման նպատակով: Ծրագրի իրականացմամբ կապահովվի ինժեներական նախագծման, մոդելավորման, պրոտոտիպավորման և արտադրական գործընթացների թվայնացման գործնական ուսուցումը՝ բարձրաց-նելով ուսանողների մասնագիտական կարողությունները և աշխատաշուկայում մրցունակությունը: Սարքավորումները կօգտագործվեն բացառապես կրթական և վերապատրաստման նպատակներով՝ քոլեջի ուսանողների, ինչպես նաև պատերազմի մասնակիցների և վետերանների, սոցիալապես խոցելի խմբերի երիտասարդների և մարզային համայնքների շահառուների մասնագիտական վերապատրաստման ծրագրերում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:

3.	Բարեգործը	Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան 0010, Խորենացու փողոց 22, ՀՎՀՀ՝ 02517115)
4.	Ծրագիրը կատարողը	«Գյումրիի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» գիտակրթական հիմնադրամ (Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Շիրակացի փողոց 68, ՀՎՀՀ՝ 05532905)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար խոշորացված համայնք, բնագավառը՝ կրթական
6.	Ծրագրի բյուջեն	26,000,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Նշան և Աիդա Կարայանների անվան» Փարաքարի կրթական հիմնադրամի «Նշան և Աիդա Կարայանների անվան արհեստների, արվեստների և տեխնոլոգիաների» քոլեջի (Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Ի. Գասպարյան փողոց 2, ՀՎՀՀ՝ 04445077)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի ապրիլի 1-ից մինչև 2028 թվականի հունվարի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Քոլեջի ինժեներիայի և կիրառական արտադրություն դասընթացների գործնական ուսումնառության կազմակերպման համար՝ նոր սերնդի արտադրական սարքերի, սարքավորումների հաստոցների ձեռքբերում և ներմուծում, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի ապրիլի 1-ից մինչև 2028 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 26,000,000 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) 3D տպիչների և համապատասխան ներկանյութերի և սարքավորումների ներմուծում՝ 10,000,000 դրամի չափով. 2) արդյունաբերական պլազմային և լազերային մետաղակտրող հաստոցի ներմուծում՝ 6,000,000 դրամի չափով. 3) կիրառական արտադրական դասընթացների կազմակերպման համար անհրաժեշտ հաստոց-մեքենաների ներմուծում՝ 10,000,000 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Փարաքարի համայնքապետարան:

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

26.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ